

ԿԻՍԼԱՆԴԸ¹ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարձրադպրոց (խոսվածք)

Ըլմ ա, լըմ չի մի թագավեր, սրան ունենըմ ա իրեք տղա, սրա պուճուր տղեն կիսատ ա ըլմ, մի դուլը ըլմ չի:

Օրերի մի օր թագավերը կանչըմ ա տղերանցը ասըմ ա.— Ես էսա կմեռնեմ, դուք կմնաք, ձեզ պահ եմ տալի. ամեն կոնի վրա կգնաք, համա էս կոնի վրա գնաք վեչ, էդ ճամփովը գնացողը եդ չի եկել:

Էդա թագավերը ասեց ու մեռավ, դրան առքով, փառքով վեր են ունում. անց ա կենըմ մի քանի ժամանակ:

Մեծ տղեն ասըմ ա.— Ես մի պետք ա փորձեմ, տենամ էն ճամփեն ի՞նչ ճամփա ա, վեր իմ հերը ասեց գնաք վեչ: Սա բերըմ ա ճմփի պաշար շինըմ ու գնըմ ա հասնըմ մի տեղ, տենըմ ա ըտի մի չոբան վեչխար ա ըրցնըմ, էնքան շատ ա, վեր սուրվի տուտն ու պուճախը բևըմ չի, ճամփեն էլ դրա միջին կորչըմ ա:

Մոտանըմ ա ասըմ ա.— Էս իմ վչխարնին, վեր կթեմ, լցնեմ էն դագանը, թե մչն իմ իրեք հետ վեչխարի չորս կոնովը պտիտ գալը կրացիր խմես, ճամփեն իրան-իրան կգա աղաքդ, թե կրացիր վեչ, արդեն եդ դառ ու գնա ձեր տուն:

Սա մտիկ ա անըմ էդ հեյվարա պղնձին, մտիկ ա անըմ էդ վեչխարի սուրուին, ասըմ ա.—

Պա՛հ, քու տերը մեռնի, էդքան վեչխարի կաթը կխմվի՛:

Սուս ու փուս բրախըմ ա ու եդ դառնըմ տուն գալի:

Միջնակ ախպերը ասըմ ա.— Հմել ես տեմ գնալ, դու կաց տանը:

Սա ձին նստըմ ա գալի ըլեդ էդ չոբանը պտահըմ ա իրան անհաշիվ վիչարի սուրուն հետը:

Ճամփեն հասնըմ ա վչխարի միջին կորչըմ ա, ասըմ ա.— Ա՛, չոբան, էս ճամփեն դորն ա:

Ասըմ ա.— Էս վեչխարս կթեմ, լցնեմ էն պղինձը, թե էնքան կաթը խմեցիր մչն իմ իրեք հետ վչխարի չորս կոնովը պտիտ գալը, ճամփեն իրան-իրան աչկիդ կրևա, թե հու կրացիր վեչ, սուս ու փուս եդ դառ, գնա ձեր տուն:

Ասըմ ա.— Լավ կլի, կթի տենամ:

Չոբանը յափնջին հանըմ ա, փթաթըմ չոբախի կլիսին, օղըմ պտտըմ ու հո՛, հո՛ անըմ, էդ սաղ վչխարնին շարվըմ են, իրար եղնա գալիս են պղնձի դրաղին գյունգա ըլըմ, միջին իրանց-իրանց կթվըմ ու գնըմ, կաթը լցվըմ ա էդ պղինձը:

Թագավերի տղեն ըրմանըմ ա, թե. «Էս մի թիքա վախտումը էդ հեյվարա սուրու վեչխարը վենց կթվեց»:

Մոտանըմ ա պղնձին, տենըմ ա ի՛նչ պղինձ, սրա տերը մեռնի, մի անտակ գադ ա, ասըմ ա.—

Է՛քե մատաղ, էս վեր էս պղինձ ա, սրա միջի կաթը վեչ թե քու իրեք հետ վչխարիդ չորս կոնովը պտիտ գալով կխմվի, այլ իրեք հագար հետ էլ պտիտ գալով չի խմվի:

Սա էլ ա բրախըմ գալի տուն:

Կիսկանդը ասըմ ա.— Հմել ես տեմ գնալ:

Ախպերտինքը ասըմ են.— Ա՛յ ախպեր, մենք մեր հալովը գնացինք, կրացինք վեչ մի բան անենք, դու գնաս ինչ տես անիլ:

Ասըմ ա.— Բան չկա, թողեք ես էլ փորձեմ:

Սա մենակ չի գնըմ, գորք ա հվաքըմ, հեյվարա դոշուն ա շինըմ ու գնըմ:

¹ Կիսատ, թերի—Ծ. Ա.:

Գալիս ա հասնում ըլեդ էդ չոբանի կուշտը, չոբանին հարց ա տալի ճմփի մասին, չոբանը էլի նույն պատասխանն ա տալի:

Ասում ա.— Լավ, համաձայն եմ, կթի:

Կաթը կթիլ ա տալի, հլե չոբանը դրադ ա ըլում, սա հա դոշունը քաշում ա էս պղնձի վրա, ամենքը մի սալդաթի կատիլով լցնում են, էլ գադ չի մնում:

Ասում ա.— Դե դուք դրադ ըլեք, ըրեաք վեչ:

Էդ մնացածի վրա յա ընգնում, սկսում խմիլը, հլե պրծնում ա, չոբանը գալիս ա կողքին կաղնում:

Ասում ա.— Էս մին, Կիսլանդ:

— Ի՞նչ մին,— ասում ա,— կարացի ոչ կաթ խմիլ, գադ չի ունեմ:

Չոբանը մտիկ ա անում տենմ սա խմել ա էլ գադ չիկա, մնում ա ըրմացած:

Միեւ Կիսլանդը տենում ա երկնքովը մինը թռած գնում ա:

Ասում ա.— Ես Ծովինարն եմ Կիսլանդ, թե տղա ես, արի ինձ տար,— ու ճամփեն էլ բացվեց:

Սա դոշունը քաշում ա էդ ճամփեն ու գնում, շատ ա գնում, թե քիչ, աստոծ ա գիդմ, ռաստ ա գալի մի հեյվարա սարի, տենում ա էդ սարը սադ մրմոնջի² թումբ ա, սար չի: Էլ ուզում չի էդ մրմոնջներին տրորի, դոշունը թեքմ ա սարի քմակովը, պատ տալի ու գնում: Մին էլ տենում ա մրմոնջի թագավերը էկավ դրա առաջը, ասում ա.— Կիսլանդ, էս մրմոնջի Զարբաթ թագավերն եմ, եփ վեր դու տիե լավութին արիք, ուզեցիր վեչ մեզ վնաս տաս, քու ճամփեն փոխեցիր, դժարացրիր: Մենք էլ քեզ լավութին կանենք, եփ տեղդ նեղ կլի, իմ անըմը կտաս, էս քեզ օգնութին կգամ:

Կիսլանդն էլ մտկում ասում ա.— Մորմոնջը ինչ ա, վեր ինձ ինչ օգնութին գա:

Ըտիան իրան ճամփեն շարունակում ա գալիս ա դեմ ըլմ մի ձորի, տենում ա էդ ձորը լիքը սատանա իրանց ճուտերովը, սա դրանց էլ չի վնաս տալի, ըլեդ սրանց թագավերն ա սրան շնորհակալ ըլում ու էրկու մազ ա տալի, ասում ա.— Ա՛ռ, տեղդ նեղ ընգնի թե չէ, ինձ օգնութին կկանչես:

Ըտիան սա ճամփա յա ընկնում զըմփ, զըմփ, զըմփ, զըմփ ձորերովը գալիս ա, դուս գալի մի սարի գլուխ:

Տենում ա հրես մի են տեսակ մեծ ապարանք կա, վեր էլ ասիլու չի, վեչ ուտես, վեչ խմես, էդ ապարանքին մտիկ անես:

Ասում ա.— Սա, որ դրսի կոնիցը էսքան գեղեցիկ ա, բա միջի կոնիցը ինչքան գեղեցիկ կլի, վեր ինչ ուզում ա ըլի, պետք ա գնամ տենամ: Գնում ա դռները բացում մտնում մեջը, տենում ա

Ծովինարը ըտի, կողքին էլ մի վիշապ քնած:

Ծովինարը ասում ա.— Եկա՛ր, Կիսլանդ:

Ասում ա.— Հա՛ :

Ասում ա.— Լավ արիք, որ էկար, բայց շատերն են էկել գլխին թողել ըստի, իննասուն իննը եկել ա, մինը էդ չի գնացել, եթե քունն էլ կտրեն, հարիրը կթմամի: Լավ կլի թողես գնաս, քանի քնած ա, քեզ բան տի հրցնիլ, թե կրացիր վեչ, քու գլուխն էլ տի կտրիլ:

Կիսլանդը ասում ա.— Ես դրանցից ընչով եմ ավել, վեր դրանց գլուխը կտրել ա, թե կարա, թող իմն էլ կտրի:

Ըտի ճամփա յա պահում մինչևը վիշապը վեր ա կենում ասում ա.— Ինչի՞ ես եկել:

Ասում ա.— Եկել եմ Ծովինարին տանեմ:

² Մրջուն—Ծ. Թ.:

Վիշապը ասում ա.— Շատ շատերն են եկել, գործ եմ տվել, կրացել չեն անեն, գլխնին կտրել եմ, քեզ էլ տեմ էն գործը տալ, թե կրացիր, էդ ա Ծովինարին կտանես, թե հո չէ, քու գլուխն էլ տեմ կտրիլ:

Ասում ա.— Լա՛վ:

Բերում ա հեյվարա կազարմա ցորեն շիանց տալի, խառնած ա ավազի հետ, մի կազարմա էլ բուրթ, ասում ա.— Էրկու օրում կրացիր էս ցորենը ավազիցը ջկես, բուրթն էլ մանես, Ծովինարը քեզ հալալ, թե հու չէ, գլուխդ ինձ ես բախշում:

Վիշապը գնում ա թե չէ, Կիսլանդը ասում ա.— Հե՛յ Ջարբաբ թագավեր, դուս արի, տեղս նեղ ա: Մեկ էլ տենում ա Ջարբաբ թագավերը էկավ, ասում ա.— Էդ ի՞նչ ա ըլել:

Ասում ա.— Պետք ա էս ցորենը դմիցը ջկես:

Ասում ա.— Վայե՛, ես էլ ասեցի մեծ բան էս խնդրում, էս հու էրկու սիաթեն բան ա:

Մեկ ասում ա.— Հե՛յ ստանի թագավեր, տեղս նեղ ա, դուս արի, հասի:

Մեկ էլ տենում ա սըտանի թագավերը վազեվազ էկավ, ասում ա.— Ի՞նչ ա ըլել:

Բերում ա բուրթը շանց ա տալի, ասում ա.— Պետք ա էս բուրթը գշերս մանեք պրծնեք:

Ասում ա.— Վայե՛, ես էլ ասեցի կարգին գործ կա, էդ հու մի ժամվա բան ա:

Սիանք մի ժամվա միջին ցորենն են դմիցը ջկում, նրանք էլ բուրդն են գզում մանում, տալի Կիսլանդին:

Կիսլանդը ըռավետը գալիս ա ասում.— Պատրաստ ա:

Վիշապը ըրմանում ա:

Ասում ա.— Դե հմի էլ մենք պետք ա կովենք:

Կիսլանդը ասում ա.— Կովենք:

Թրերը վեր են ունում, դուս գալի մեյդան:

Ուշաբը ասում ա.— Առաջ ես տեմ խփիլ:

Ասում ա.— Լավ կլի:

Հլե վրա յա բերում, վեր սրա գլուխը թոցնի, սա ծուլ ա ըլում էն կռանը կաղնում:

Ասում ա.— Դե հմի էլ ես եմ խփում:

Ասում ա.— Լա՛վ:

Վեր գնում գալիս ա սրան թրով միետ խփում ա, սա մեշտեղիցը էրկու հալալ կես ա ըլում:

Ուշաբը ասում ա.— Միետ էլ արի:

Ասում ա.— Չէ՛, իմ նանը ինձ միետ ա բերել, մի քեզ թափ տու:

Սա թափ ա տալի թե չէ, մի կեսը մի կուռն ա ընգնում, մի կեսն էլ մի:

Էս վիշապի հարստութիւնը բարձր ա ձիերին, Ծովինարին վեր ունում, գալի իրան հոր երկիրը: Օխտը օր, օխտը քշեր ուտում-խմում քեփ են անում: Նհանք հասնում են իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Ըստանից իրեք խնձոր վեր ընգավ՝ մինը հեքիաթ ասողին, մինը գրողին, մինն էլ անգաճ դնողներին: